# Ա. Զ. Դ.

*Վեհափառ Հայրապետի Դիւանը սորանով յայտարարում է ի գիտութիւն քահանաների, որ* 1906 *թուից արդէն կարգադրուած է՝ այլ ևս չուղարկել Մոսկուայի Լազարեան ճեմարանը Վեհափառ Հայրապետի անունով քահանաների որդիներից որոշուած որդեգիրներին, այլ փոխանակ Լազարեան ճեմարանի՝ պէտք է ընդունուին և սովորեն Մայր Աթոռի Հոգևոր ճեմարանում ի հաշիւ Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցական խորհրդի։ Բացի սորանից Դիւանս յայտնում է, որ նոյն որդեգիրների սահմանուած թիւը լրացած լինելով, այս առթիւ տրուած խնդիրները կը մնան առանց հետևանքի Նորին Սրբութեան կողմից։*

*Դիւանապետ՝* **Յուսիկ վարդապետ**

*Ի 4-ն Յուլիսի* 1907 *ամի*

*Թ.* 1141